



*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ*

*ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 20-Ի ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏ*

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

2022 թվականի մայիսի 20-ին ժամը 15:00-ին Վաղարշապատ համայնքի ավագանու նստավայրում՝ քաղաք Էջմիածին, Մբ.Մ.Մաշտոցի փողոց 0 հասցեում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի չորրորդ նիստը, որին մասնակցում էր Վաղարշապատ համայնքի ավագանու 14 անդամ, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի չորրորդ նիստին հրավիրված են համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստը վարում է համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Նիստն արձանագրում է աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր փոխարինող Կ. Եսայանը:
Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության և համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում է առցանց հեռարձակմամբ:

Նիստը վարողը՝ համայնքի ղեկավարը, ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցը և առաջարկեց քննարկել ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի առաջին նստաշրջանի մայիսի 20-ի չորրորդ նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԳԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18 - Ի N 21-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵԿԵԾԻՌՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ <<ԵՂԷՇԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՑԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՂԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունեց թիվ 86 որոշումը:

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 18-ի N 21-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթազրկվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝	կողմ - 14
	դեմ – 0
	ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 87-Ն որոշումը:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով լուծարային գործընթացում գտնվող համայնքային ենթակայության մի շարք համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունների լուծարային միջանկյալ հաշվեկշիռները հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթազրկվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝	կողմ - 14
	դեմ – 0
	ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 88 որոշումը:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝ գեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը, իսկ աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնի պետի ժ/պ Լիլիթ Հակոբյանը ներկայացրեց քննարկվող հարցի վերաբերյալ մանրամասներ:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի <<Եղիշե Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոց>> համայնքային ոչ առեվտրային կազմակերպություն ստեղծելու, կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 89 որոշումը:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝ գեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը, իսկ աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնի պետի ժ/պ Լիլիթ Հակոբյանը ներկայացրեց քննարկվող հարցի վերաբերյալ մանրամասներ:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի «Հովհաննես Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առեվտրային կազմակերպություն ստեղծելու, կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամները հերթագրվեցին: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունները՝ Գոռ Ղազարյանը և Ներսես Մելիքյանը:

Հարց: Գոռ Ղազարյան. Ինչո՞ւ գրադարանում և պատմագագարական թանգարանում նախատեսված չեն պահակների հաստիքներ:

Պատասխան: Դ. Գասպարյան. Պատմագագարական թանգարանը գտնվում է համայնքապետարանի շենքում, իսկ շենքը հսկվում է տեսախցիկներով և դա իրականացվում է անվտանգության աշխատակիցների կողմից, ուստի կարիքը չկա, իսկ գրադարանի շենքի արտաքին և ներքին մասերում տեղադրված են տեսախցիկներ և շենքը հսկվում է 24 ժամյա ռեժիմով, այդիսկ պատճառով կարիք չկա պահակի:

Հարց: Ներսես Մելիքյան. Գրադարանի հաստիքացուցակում ներառված են արդյո՞ք կազմարարներ:

Պատասխան: Լիլիթ Հակոբյան. Կազմարարներ հաստիքացուցակով նախատեսված են, քանի որ շատ գրքեր վերանորոգման կարիք ունեն:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 90 որոշումը:

Օրակարգի 5-րդ հարցի առթիվ՝ գեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը, իսկ աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնի պետի ժ/պ Լիլիթ Հակոբյանը ներկայացրեց քննարկվող հարցի վերաբերյալ մանրամասներ:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի «Մակար Եկմայանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» համայնքային ոչ առեվտրային կազմակերպություն ստեղծելու, կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 91 որոշումը:

Օրակարգի 6-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը, իսկ աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնի պետի ժ/պ Լիլիթ Հակոբյանը ներկայացրեց քննարկվող հարցի վերաբերյալ մանրամասներ:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի «Սպիրիդոն Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց» համայնքային ոչ առեվտրային կազմակերպություն ստեղծելու, կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 92 որոշումը:

Օրակարգի 7-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը, իսկ աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնի պետի ժ/պ Լիլիթ Հակոբյանը ներկայացրեց քննարկվող հարցի վերաբերյալ մանրամասներ:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպություն ստեղծելու, կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 93 որոշումը:

Օրակարգի 8-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Դիանա Գասպարյանը, իսկ աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնի պետի ժ/պ Լիլիթ Հակոբյանը ներկայացրեց քննարկվող հարցի վերաբերյալ մանրամասներ:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի «Պատմազգագրական թանգարան» համայնքային ոչ առեվտրային կազմակերպություն ստեղծելու, կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 94 որոշումը:

Օրակարգի 9-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Դիանա Գասպարյանը, իսկ աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնի պետի ժ/պ Լիլիթ Հակոբյանը ներկայացրեց քննարկվող հարցի վերաբերյալ մանրամասներ:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի «Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարան» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունն ստեղծելու, կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 95 որոշումը:

Օրակարգի 10-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Դիանա Գասպարյանը, իսկ թիվ 1 մարզադպրոց ՀՈԱԿ-ի տնօրեն Ժորա Վարդանյանը ներկայացրեց քննարկվող հարցի վերաբերյալ մանրամասներ:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի «Մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունն ստեղծելու, կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի «Հովհաննես Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունն ստեղծելու, կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամները հերթագրվեցին: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունները՝ Հրաչյա Ավետիսյան:

Հարց: Հրաչյա Ավետիսյանը. Առաջարկեց փոփոխել բժշկի, բուժքրոջ և հանդերձապահների աշխատավարձերը, որպեսզի տարանջատվեն, բոլորի աշխատավարձերի չափը նույնն է:

Պատասխան: Դ. Գասպարյան. Սույն տարվա ավարտին 2023 թվականի համար նախատեսված հաստիքացուցակները հաստատելու ընթացքում Ձեր առաջարկությունը հաշվի կառնվի:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 96 որոշումը:

Օրակարգի 11-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Մհեր Մկրտչյանը: Ներկայացնելով Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝	կողմ - 14
	դեմ – 0
	ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 97 որոշումը:

Օրակարգի 12-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Մհեր Մկրտչյանը: Ներկայացնելով Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Նիստը վարողը հայտարարեց 10 րոպե ընդմիջում:
Ընդմիջումից հետո վերսկսեց օրակարգի 12-րդ հարցի քննարկումը:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝	կողմ - 14
	դեմ – 0
	ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 98 որոշումը:

Օրակարգի 13-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Մհեր Մկրտչյանը: Ներկայացնելով տեղական տուրքի գծով արտոնություն տրամադրելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝	կողմ - 14
	դեմ – 0
	ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 99 որոշումը:

Օրակարգի 14-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Մհեր Մկրտչյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանն անհատույց օտարելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝	կողմ - 14
	դեմ – 0

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 100 որոշումը:

Օրակարգի 15-րդ հարցի առթիվ՝ համայնքի ղեկավարը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական հինգերորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝	կողմ - 14
	դեմ – 0
	ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 101 որոշումը:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված: